



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(62), 2010

ՀԱՏԱՊՏՂԱՅԻՆ ԿԵՆԻՆ (*Taxus baccata* L.) ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ

Ժ.Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ¹, Վ.Լ. ԲԱԴՅԱՆՅԱՆ², Ռ.Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ³

¹ ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ

² ՀՀ ԲՆ Արգելոցապարկային համալիր ՊՈԱԿ

³ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
E-mail: badalyan_vahan@yahoo.com

Ուսումնասիրություններն իրականացվել են Դեբեդ գետի ավազանում (Հաղպատ վտակ): Արդյունքները վկայում են, որ տվյալ տարածաշրջանում հատապտղային կենին (*Taxus baccata* L.) առնվազն 300 տարեկան է: Հնդհանուր առմամբ այս տեսակը գտնվում է ղեգրադացված վիճակում, ինչի վկայությունն են ծառերի բների փտած և քայքայված լինելն ու զագայթների բացակայությունը: Բնական վերականգնման հետ կապված նույնպես առկա են խնդիրներ, քանի որ ուսումնասիրությունների ժամանակ հանդիպել է միայն մեկ 1-2 տարեկան 5 սմ բարձրությամբ սերմնաբուսակ: Այս տեսակի պահպանման և վերականգնման ուղղությամբ անհրաժեշտ է կատարել գործուն քայլեր, այլապես մեր կողմից բացահայտված այս նոր աճելավայրի մասին պահպանված միակ վկայությունը այս հրապարակումը կլինի:

Կենի - ասեղնատերև - ռելիկտ - կենսաբազմազանություն

Результаты исследований показывают, что в бассейне реки Дебед (пр. Ахпат) тисс ягодный (*Taxus baccata* L.) растет не менее 300 лет. В целом этот вид находится в деградированном состоянии, о чем свидетельствуют гнилые пни и отсутствие верхушек. Есть проблемы также с естественным возобновлением, т.к. во время исследований был обнаружен только один 1-2-летний сеянец высотой 5 см. Для охраны и восстановления этого вида необходимы серьезные мероприятия.

Тисс - хвоя - реликт – биоразнообразие

As a result of River field investigations in the valley of Haghpata River (tributary of Debed River), at altitudes 1000-1075 m above sea level, several approximately 300 year-old *Taxus baccata* trees have been recorded for the first time. In the investigated area the *Taxus* trees are growing in mixed forest (with species of *Fagus*, *Quercus*, *Carpinus* etc.), on slopes of various orientation. The recorded plants are in bad situation: they have been cut for at least several times, the most of plants lack top and the stems decay because of fungal infections caused by many cuts. The natural restoration of *Taxus* is not satisfying as well; we noticed only one 1-2 year old seedling with 5 cm height in this territory. Above mentioned situation otherwise suggests that it is necessary to protect *Taxus baccata* in this area, else this publication will remain as the last evidence of *Taxus* trees growing in the middle of Debed River basin.

Yew - conifer - relic - biodiversity

Հատապտղային կենին (*Taxus baccata* L.) պատկանում է կենազգիների (Taxaceae) ընտանիքին: *Taxus* ցեղի սակավաթիվ (8 տեսակ) ներկայացուցիչներն ունեն

տարածման բավական ընդարձակ արեալ՝ հանդիպում են Եվրոպայում, Արևելյան Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում:

Հատապտղային կենին ռեկլիտային ծառատեսակ է, այն լայն տարածում է ունեցել հնագույն ժամանակներում [3-5], սակայն կլիմայական փոփոխությունների, իսկ հետագայում նաև մարդու անխնա օգտագործման հետևանքով տեղի է ունեցել արեալի զգալի կրճատում: Ներկայումս անհամեմատ փոքր ծառատներով ու հատուկենտ ծառերով, հատապտղային կենին պահպանվել է Արևմտյան Եվրոպայի գրեթե բոլոր անտառային շրջաններում, Աֆրիկայի հյուսիսային մասերում, Ղրիմում, Հիմալայներում և Կովկասում:

Հայաստանում այս տեսակի տարածվածության էկոլոգո-ցենոտիկ առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրություններ կատարվել են դեռևս 20-րդ դարի 40-ականներին Մախատաձեի և Տրոյիցկու կողմից [11]: Հետագայում հատապտղային կենու ուսումնասիրմամբ զբաղվել են Լազավոյը, Մուլքիջանյանը, Խուրշուդյանը, Աբրահամյանը և այլոք [1,2,4], որոնց աշխատանքների արդյունքները վկայում են, որ կենին հանդիպում է Հայաստանում հյուսիս-արևելյան՝ Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի և հարավ-արևելյան՝ Կապանի տարածաշրջաններում: Հյուսիսային շրջաններում հանդիպում է հիմնականում հաճախեմու, հազվադեպ կաղնու և բոխու, իսկ Զանգեզուրում՝ բոխու, կաղնու, հացենու խառը անտառներում, որոնցում հանդես է գալիս որպես ուղեկցող տեսակ հատուկենտ ծառերի կամ փոքր խմբերի տեսքով, հազվադեպ ունենալով գերակշռող դեր այդ համակեցություններում (Դիլիջան-գ.Աղավնավանք, Զանգեզուր-գ.Գեղանուշ):

Հատապտղային կենին 10-25 (30)մ բարձրության մինչև 150 (250)սմ բնի տրամագծով երկտուն, հազվադեպ միատուն ծառ է [3,6]: Ասեղնատերևներն ունեն 2-3,5 սմ երկարություն, որոնք ապրում են 6-8 տարի: Կեղևը բարակ է, կարմրա-գորշավուն, սկզբում հարթ, այնուհետև ճաքճքվում է, անջատվում թիթեղներով: Պտղաբերում է ամեն տարի. բաց տարածքներում՝ սկսած 20-30, անտառում՝ 70-120 տարեկանից մինչև գերհասուն տարիք: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին: Փռնոտումը տեղի է ունենում քամու միջոցով: Հասունանում է ,ծաղկման տարին՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Սերմերը ձվաձև են, սրածայր: Սերմնակիցը (պտղամիսը) վառ կարմիր է, գավաթանման, սերմը ընդգրկում է մինչև գագաթը, սակայն այն չի սերտաճում և սերմը չի պարփակում իր մեջ: Հանգստի ժամանակահատվածը սերմերի մոտ տևում է 20-32 ամիս: Կենին հանդիսանում է շատ երկարակյաց ծառատեսակ՝ ապրում է մինչև 1000, հազվադեպ 4000 տարի:

Սովորաբար է, սակայն կարող է աճել նաև ինտենսիվ լույսի պայմաններում:

Լավ է հարմարվում թույլ թթվային և չեզոք ռեակցիա ունեցող կավճային ու կրային հողերում, սակայն պահանջում է հարուստ, խոնավ հողեր: Դժվար է հարմարվում հողի ճահճացմանը:

Խառը անտառներում կենին հիմնականում հանդես է գալիս որպես ուղեկցող տեսակ, հազվադեպ հանդիպում է նաև բաց տարածքներում: Կենու ծառատներում լուսային պայմանների անբավարարության պատճառով ենթանտառը գրեթե բացակայում է, թույլ է զարգանում խոտածածկը, որը, հիմնականում, կազմված է պտերներից, հացազգի լայնատերև խոտաբույսերից: Կենին լավ է դիմակայում օդում գազի և ծխի առկայության, կարող է նորմալ աճել ու զարգանալ 25-30° սառնամանիքների պայմաններում:

Դա թունավոր ծառատեսակ է, թունավոր են հատկապես ասեղնատերևները, ընդ որում, որքան ասեղնատերևները հին են, այնքան նրանցում թույնի պարունակությունը շատ է լինում կարող է մահվան պատճառ հանդիսանալ [3, 8]: Միայն ,պտղամիսն է, որ թույն չի պարունակում:

Ֆիտոնցիդներ արտադրելու շնորհիվ կենին ունի մանրէասպան հատկություն:

Բնափայտը չափազանց ամուր է, ծանր (0.88 գ/սմ³), ճկուն և մանրաշերտ: Բնափայտի յուրահատուկ կարմրա-գորշավուն (կարմրա-դեղնավուն) գույնի շնորհիվ կենուն հաճախ անվանում են նաև կարմրածառ (բզենի, գեղձի), իսկ Ալավերդիում, որտեղ և կատարվել են մեր ուսումնասիրությունները, այս ծառատեսակին անվանում են ,տուտիվարիե: Հրաշալի հղկվում է, շատ բարձր է գնահատվում հատկապես բարձրորակ կահույքի արտադրության մեջ:

Նյութ և մեթոդ: Աշխատանքի համար նյութ է ծառայել Դեբեդ գետի Հաղպատ վտակի ավազանը: Տարածքի ընտրությունը պայմանավորված է տարածաշրջանի անտառածածկի պայմանների վերլուծությամբ՝ համեմատականներ են անց կացվել մյուս տարածքների՝ մասնավորապես, Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղի հարակից տարածքում գտնվող կենու պուրակի անտառածածկի պայմանների հետ, և հավանական համարել կենու առկայություն վերոհիշյալ հատվածում:

Ուսումնասիրություններն իրականացվել են 2009թ-ին երթուղային եղանակով, որը համադրվել է փորձահրապարակներով ուսումնասիրության հետ: Հնարավորության սահմաններում ուսումնասիրվել է բացահայտված ծառերի շրջակա բույսերի տեսակային կազմը [6, 10], կատարվել է տվյալ ծառուտի անտառգնահատման ցուցանիշների որոշման աշխատանքներ [7,12]:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտվող տարածքի բարենպաստ անտառածածկի պայմանների շնորհիվ ստեղծվել է հաճախեմու (*Fagus*), կաղնու (*Quercus*) և բոխու (*Carpinus*) գերակշռությամբ խառը անտառներ, որտեղ գլխավոր անտառակազմող տեսակներին ուղեկցում են թխկին (*Acer*), հացենին (*Fraxinus*), լորենին (*Tilia*):

Հազվադեպ հանդիպում են նաև արոսենու (*Sorbus*), գիհու (*Juniperus*) կենու առանձնյակներ: Հատապտղային կենին այստեղ հանդես է գալիս հիմնականում փոքրիկ խմբերի մենածառերի տեսքով (աղ.1): Աղյուսակում ներկայացված են ծառերի գտնվելու կոորդինատները, լանջի բնութագրերը, ծառերի քանակը յուրաքանչյուր ծառի տրամագիծն ու բարձրությունը: Ներկայացված տվյալների վերլուծությունից կարելի է ասել, որ կենին հանդիպում է գրեթե բոլոր կողմնադրությունների զառիթափ լանջերի միջին և ստորին հատվածներում, որտեղ առկա են այս տեսակի աճման համար առավել բարենպաստ պայմաններ:



Նկ.1 Հատապտղային կենին Դեբեդ գետի ավազանում (Օգոստոս, 2009թ.)

Հայտնաբերված գրեթե բոլոր կենիների վրա ակնհայտ էր անթրոպոգեն ազդեցություն՝ վնասված, հատված ծառեր ու զազաթներ:

Ծառերի մոտ առկա էր բների փտածություն, ինչի պատճառով հնարավոր չէր ճշգրիտ որոշել տարիքը, սակայն չփտած հատվածի միջին և ընթացիկ աճերի վերլուծությունից կարելի է ենթադրել, որ տրամագծի 1 սմ աճը տեղի է ունենում մոտ 10 տարվա ընթացքում ծառերի հնարավոր առավելագույն տարիքը կարող է կազմել 300-350 տ:

Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսացել նաև այն ծառուտները, որոնց կազմում առկա էին կենիներ (աղ.2): Բոլոր ծառուտներում ենթանտառի կազմում հանդիպում էին կտակենու (*Sambucus*), հոնի (*Cornus*), մոշի (*Rubus*) ոչ մեծ քանակության թփեր, միայն ցածր լրիվությամբ ծառուտներում մոշի առատություն էր նկատվում:

Աղյուսակ 1. Հատապտղային կենու դենդրոմետրիկ ցուցանիշները ըստ լեռնագրական պայմանների

N	Աշխարհագրական կոորդինատները	Լանջի բնութագիրը	Ծառերի քանակը	Բնի տրամագիծը, սմ	Ծառի բարձրությունը, մ
1	41°04'03" 044°42'43" ԾՄԲ - 1025 մ	հա 45°, թույլ էռոզացված, լանջի ստորին հատված	3	31 26 26	5.0 5.0 3.5
2	41°04'01" 044°42'39" ԾՄԲ - 1050 մ	հա 45°, թույլ էռոզացված, լանջի միջին հատված	1	32	6.5
3	41°03'49" 044°42'44" ԾՄԲ - 1030 մ	ալ 60°, ուժեղ էռոզացված, լանջի ստորին հատված	1 /ընկած/ 4 մցո	20 1.0-2.5	- 1.5-3.0
4	41°03'46" 044°42'44" ԾՄԲ - 1050 մ	հա - առ 40°-50°, թույլ էռոզացված, լանջի ստորին և միջին հատված	2	30 24	5.0 6.5
5	41°03'40" 044°42'54" ԾՄԲ - 1075 մ	հա - առ 50°, թույլ էռոզացված, լանջի միջին հատված	1 3 կոճղ 6 մցո. և կճղ.	14 26, 30, 30 2-5	5.0 - 2.0-3.0

Ծանոթություն - ԾՄԲ-ծովի մակարդակից բարձրություն, հա-հարավային, հս-հյուսիսային, ալ-արևելյան, առ-արևմտյան, մցո. և կճղ.- մացառ և կոճղաշիվ:

Աղյուսակ 2. Կենու մասնակցությամբ ծառուտների դենդրոմետրիկ և անտառզնահատման ցուցանիշները

N	Ծառուտի կազմը	Տեսակը	Դենդրոմետրիկ ցուցանիշները			Անտառզնահատման ցուցանիշները			
			Տրամագիծը, սմ	Բարձրությունը, մ	Տարիքը, տարի	Բնիտեղը	Լրիվությունը	Մատուցի	
								Կազմը	Քանակ
1	5կ5լ	կ լ	40 36	14 14	100 100	IV	0.2	5բ3հց1կ1թխ	10 000
2	4հ4լ2բ եզ կենի	հ լ բ	48 32 36	23 20 20	140 100 120	III	0.6	3հ4բ3լ	400
3	8հ2բ եզ կենի	հ բ	48 32	16 14	140 120	IV III	0.3	6բ2հ2հց	1 000
4	5թխ3բ1հ1լ եզ կենի, արոսենի	թխ բ հ լ	44 28 44 16	22 13 22 10	130 70 130 40	III	0.6	4թխ3լ3բ	500
5	3կ3հց2լ1բ1ղ եզ կենի	կ հց լ բ ղ	26 22 40 30 14	16 14 17 15 7	100 70 110 100 -	IV	0.5	3թխ3հց2բ1ղ1կ	800

Ծանոթություն - կ-կաղնի, հ-հաճարենի, Լ-լորենի, բ-բոխի, թխ-թխկի, հց-հացենի, ղ-ղաժի, եզ-եզակի:

Մատղաշի ուսումնասիրության համար ընտրվել են 100 մ² մակերեսով փորձահրապարակներ, որի տվյալները բերված են աղ. 2-ում, սակայն հարկ է նշել, որ ուսումնասիրությունների ժամանակ միայն II-րդ ծառուտում կենու մեկ սերմնաբուսակ հայտնաբերեցինք: Կենդանի ծածկոցի առկայությունը, առատությունը և տեսակային կազմը պայմանավորված էր սաղարթի միակցվածությամբ, որի կազմում հանդիպում են հիմնականում քարավույտ երփներենգ (*Coronilla varia*), թունաթափ սուր (*Cynanchum acutum*), եղինջ այրող (*Urtica urens*), կանթեղախոտ (*Chelidonium sp.*), վիկ թավոտ (*Vicia villosa*), սնդրիկ (*Polygonatum sp.*), պտեր (*Polypodium sp.*) և այլն:

Ուսումնասիրությունների ընթացքում մեզ աջակցել են անտառտնտեսության նախկին ավագ որսագետ Գագիկ Անտոնյանը և նրա կինը՝ Անահիտ Անտոնյանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Ա.Ա., Վարդանյան Շ.Հ., Վարդանյան Դ.Վ. Հայաստանի դենդրոֆլորայի մշտադալար տեսակները, դրանց պահպանության վիճակն ու վերարտադրության ուղիները, Հայաստանի ֆլորայի բուսական ծածկույթի վիճակն ու պահպանությունը ԵրԺան, էջ 152-165, 1984:
2. Խուրշուդյան Պ.Ս. Պահպանենք ռելիկտային կենու անտառները, Հայաստանի բնություն, №1, էջ 47-48, 1962:
3. Վարդանյան Շ.Հ. Ծառագիտություն, Եր. 2005.
4. Артамонов В.И. Редкие и исчезающие растения, М. 1989.
5. Варданян Ж.А. Деревья и кустарники Армении в природе и культуре, Ереван, 2003.
6. Дендрофлора Кавказа, т-1, Тб. 1959.
7. Деревья и кустарники СССР, т-1, М.-Л, 1949.
8. Магакьян А.К. Растительность Армянской ССР, М.-Л., 1941.
9. Сеннов С.Н. Лесоведение и лесоводство, М., 2008.
10. Сосновский Д.Н., Махатадзе Л.Б. Краткий определитель деревьев и кустарников Армянской ССР, Ереван, 1950.
11. Троицкий Н.А., Тисс в Дилижанском районе Арм.ССР, Сб. науч. тр. бот. общ. 2, стр.33-42, 1939.
12. Ярошенко П.Д. Геоботаника, М.-Л. 1961.

Ստացվել է 10.12.2009